

Դրամաշնորհային հաշվետվություն N 2

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	Տարեցների և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ
Դրամաշնորհի N	1032-11002/24 ՇՄ
Դրամաշնորհատու կազմակերպություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Դրամաշնորհատու կազմակերպություն	Հայկական Կարմիր Խաչի Ընկերություն
Ծրագրի իրականացման ժամանակահատված	03.01.2024-31.12.2024
Հաշվետու ժամանակահատված	03.01.2024-31.12.2024
Ներկայացման օր	10.01.2025
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	Կարինե Կուրդիյան Ծրագրի համակարգող

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1

հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Շիրակի մարզի Անի Համայնքի Մարալիկ քաղաքում ՀԿԽԸ-ն տնային խնամքի ծառայություն է իրականացնում դեռևս 2016 թվականից, սակայն պետական դրամաշնորհով ծառայություն սկսել է իրականացնել 2024 թվականի հունվար ամսից: Սոցիալական աշխատողի և խնամքի անձնակազմի ջանքերով արագ հայտնաբերվել են տնային խնամքի կարիք ունեցող միայնակ տարեցներ, հատկապես Արցախից տեղահանված անձինք, ովքեր ուղղորդվել են միասնական սոցիալական ծառայություն՝ ուղեգրման նպատակով: Աշխատակազմը, ակտիվ համագործակցելով միասնական սոցիալական ծառայության աշխատակիցների հետ, փորձել է խնամքի ծառայության մեջ ընդգրկել միայնակ տարեցների, ովքեր ինքնուրույն դժվարանում են իրականացնել ինքնախնամքը, կարիք ունեն աջակցության՝ տնային սպասարկման, կենցաղային հարցերի կազմակերպման, գնումների, ինչպես նաև անհատական անձնական խնամքի կազմակերպման հարցերում: Առաջին եռամսյակի ընթացքում հայտնաբերվել և միասնական սոցիալական ծառայություն էին ուղղորդվել բազմաթիվ խնամառուներ, ովքեր կարիքի գնահատումից հետո անմիջապես ծառայություն են ստացել ՀԿԽԸ կողմից: Խնամառուների խնամքի իրականացման համար նախապես կատարվել է կարիքների գնահատում, իսկ նախորդ տարվանից ընդգրկված խնամառուների համար՝ կարիքների վերագնահատում, որի ժամանակ խնամառուի հետ քննարկվել է անհրաժեշտ աջակցության տեսակները, կազմվել այցելությունների գրաֆիկ: Այս ամենի հիման վրա ծառայության ավագ բուժքույրի կողմից մշակվել է խնամքի պլան, ըստ որի էլ կատարվել է տնային սպասարկողմի, ծառայության բուժքույրի և սոցիալական աշխատողի կողմից ծառայությունների մատուցումը: Յուրաքանչյուր շահառուի համար կազմվել է անհատական խնամքի պլան՝ ելնելով վերջինիս կարիքների առանձնահատկություններից, որի համաձայն էլ իրականացվել է խնամքի տրամադրումը:

Խնամքի տրամադրման գործողությունների և տրամադրված խնամքի պարագաների վերաբերյալ կատարվել են համապատասխան գրառումներ խնամառուների դինամիկ հսկողության թերթիկներում, ինչպես նաև խանամառուի անձնական թղթապանակում:

Ըստ սահմանված աշխատանքային պլանի, իրականացվել է՝

- սոցիալ-առողջապահական խնամքի տրամադրում, ներառյալ խնամքի պարագաների տրամադրում,
- կենցաղային օգնություն և սպասարկում,
- կամավորների այցելություններ,
- սոցիալական աշխատողի այցելություն, գնահատում, ուղղորդում,

- հոգեբանի խորհրդատվություն,
- մշակութային միջոցառումների կազմակերպում,
- մոնիտորինգային աշխատանքներ:

Տարեկան երկու անգամ՝ վեց ամիսը մեկ անգամ հաճախականությամբ իրականացվել է շահառուների կողմից խնամքի որակի գնահատման գործընթաց, որի նպատակն է հասկանալ, թե որքանով են մատուցվող ծառայությունները բավարարում խնամառուին, օգնում են արդյոք վերջիններիս հաղթահարել իրենց խնամքի և ինքնասպասարկման կարիքները, արդյո՞ք կա դրական կամ բացասական դինամիկա նախապես գնահատված ցուցանիշների համեմատությամբ: Գնահատման արդյունքները ծառայության համակարգողի մասնակցությամբ քննարկվել են թիմի ներսում և անհրաժեշտության դեպքում համապատասխան քայլեր ձեռնարկվել:

Յուրաքանչյուր խնամառուի տանը մշտապես առկա են եղել դինամիկ հսկողության թերթիկներ, որի վրա այցելության օրերին լրացվել են տնային սպասարկողի և բուժքույրի կողմից կատարված աշխատանքները, խնամառուի վիճակի հետ կապված նշումներ արվել: Շահառուների դինամիկ հսկողության ընթացքում հայտնաբերված խնդիրներին տրվել է արագ արձագանք, կատարվել համապատասխան ուղղորդումներ, աջակցել փաստաթղթերի ձեռքբերման, լրացման հարցում, կազմակերպվել վերջիններիս տեղափոխություն բժշկական հաստատություններ:

Շարունակական են եղել նաև կամավորների կողմից կատարվող այցերը և աջակցության տրամադրումը խնամառուների համար գնումների կազմակերպման, զրույցի, զբոսանքի, ընթերցանության և այլ հարցերում:

Խնամառուներին ցուցաբերվել է անհատական մոտեցում: ՀԿԽԸ կողմից անհրաժեշտ տնային խնամքի միջոցներ են տրամադրվել խնամքը կազմակերպելու համար, եթե խնամառուի տանը մաքրող միջոցներ չեն եղել:

Ավելի ինտենսիվ հսկողություն է սահմանվել առողջական խնդիրներ ունեցող և ընթացիկ բուժման մեջ գտնվող խնամառուների նկատմամբ ոչ միայն տնային սպասարկողի, այլև խնամքի բուժքույրի և ավագ բուժքրոջ կողմից: Անհրաժեշտության դեպքում ՀԿԽԸ գրասենյակի կողմից կազմակերպվել են առաջին բուժօգնության կանչեր, խնամառուների ուղեկցում կամ տեղափոխում բժշկական հաստատություն, իսկ բժշկի նշանակումների և ցուցումների հիման վրա իրականացվել է նաև տնային պայմաններում հետագա բուժքույրական ծառայության տրամադրումը:

Հաշվետու տարվա ընթացքում կազմակերպվել են տարբեր բնույթի միջոցառումներ, որոնցում ներգրավվել են ծրագրի այն խնամառուները, ովքեր ցանկություն և առողջական վիճակից ելնելով հնարավորություն են ունեցել մասնակցելու: Տարեցների սոցիալականացմանը մեծապես նպաստել են նաև ՀԿԽԸ կամավորները, ովքեր մշտապես այցելել են խնամառուներին, զրուցել նրանց հետ, պատմել համայնքի նորությունների, տարեցներին հետաքրքրող թեմաների մասին տեղեկություններ տրամադրել, ցանկության դեպքում նրանց դուրս բերել զբոսանքի, ուղեկցել այս կամ այն վայր, օգնել տնային սպասարկման հարցերում, եե տվյալ օրը

չի նախատեսված տնային սպասարկողի այց և այլն: Միջոցառումներին մասնակցելու համար ՀԿԽԸ իր միջոցներով կազմակերպել է նրանց տեղափոխումը, եթե խնամառուի տանից հեռու է, կամ խնամառուն հնարավորություն չի ունեցել ինքնուրույն այցելել միջոցառման վայր:

2024թ. ընթացքում տնային խնամքի ծառայության շրջանակներում ընդհանուր թվով սպասարկվել է 27 շահառու, բոլորն ուղեգրված են ՄՄԾ կողմից, նրանցից 14-ը հաշմանդամություն ունեցող անձինք են, 4-ը՝ «Ա» խմբի շահառու, 10-ը՝ Արցախից բռնի տեղահանված անձինք:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում, ըստ սահմանված աշխատանքային պլանի, իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Սոցիալ-առողջապահական խնամքի տրամադրում՝ խնամքը տրամադրվել է խնամք իրականացնող անձնակազմի՝ բուժքույրերի միջոցով կարիքների գնահատման և անհատական խնամքի պլանի հիման վրա: Այն ներառել է բժշկի նշանակմամբ դեղերի և բժշկական նշանակության նյութերի ստացման գործում աջակցություն, վերքերի մշակում, զարկերակային ճնշման որոշում, արյան մեջ գլյուկոզայի քանակի վերահսկում, ուղղորդում բժշկական հաստատություն՝ հետազոտման և այլն: Կարիքի դեպքում, խնամքին զուգահեռ խնամառուները ապահովվել են նաև խնամքի միջոցներով:
- Տնային խնամողների կողմից կենցաղային օգնություն և սպասարկում է տրամադրվել շահառուներին, մասնավորապես անձնական հիգիենայի պահպանում, տան մաքրում, սննդի պատրաստում, կերակրում, լվացք և կենցաղային մի շարք այլ գործառնություններ՝ կարիքների գնահատման և անհատական խնամքի պլանի հիման վրա: Ծառայությունը տրամադրվել է տնային խնամողների կողմից:
- Կամավորների այցելություններ, ներառյալ ընկերակցում, զրույց, ընթերցանություն, գնումների իրականացում, աջակցություն մանր կենցաղային հարցերում, այլ՝ կարիքների գնահատման և անհատական խնամքի պլանի հիման վրա: Կամավորների գործունեությունը նպաստում է նաև շահառուների սոցիալիզացիային:
- Սոցիալական աշխատողն իրականացրել է խորհրդատվության տրամադրում, գնահատում, ուղղորդում՝ տարածքային ՄՄԾ մասնագետների հետ սերտ համագործակցությամբ:
- Շահառուների առողջական վիճակի արդյունավետ վերահսկողության համար ավագ բուժքույրը և խնամքի բուժքույրերը մշտական կապի մեջ են եղել

տեղամասային բժիշկների հետ: Անհրաժեշտության դեպքում կազմակերպվել են բժիշկների տնային այցեր:

- ՀԿԽԸ Շիրակի մարզային մասնաճյուղի ավագ բուժքույրը և ծառայության համակարգողը իրականացրել են մոնիտորինգային աշխատանքներ՝ այցելելով սպասարկվող շահառուների տներ՝ գնահատելու մատուցվող ծառայությունների որակը:

- Հաշվետու տարվա ընթացքում կազմակերպվել են տարաբնույթ սոցիալական միջոցառումներ, որոնք պլանավորվել են՝ ելնելով շահառուների ցանկություններից, հաշվի առնելով նաև նրանց մասնակցելու հնարավորությունները: Իրականացված միջոցառումների մասին տեղեկատվությունը, ինչպես նաև դրանց լուսաբանման մասին հղումներն արտացոլված են եռամսյակային հաշվետվություններում: Սոցիալական աշխատողները և տնային խնամքի և մարզային մասնաճյուղի աշխատակիցները կամավորների հետ միասին արել են հնարավոր ամեն ինչ՝ խնամառուների կյանքի որակը լավացնելու, նրանց առօրյան ավելի հագեցած և հետաքրքիր դարձնելու և ամենակարևորը՝ իրենց անտեսված չզգալու ուղղությամբ: Ծրագրի շրջանակում սպասարկվել է 27 շահառու:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

Տարեցների համար կազմակերպված սոցիալական միջոցառումների մասին լուսաբանող նյութերը, լուսանկարները արտացոլված են եղել եռամսյակային հաշվետվություններում: Կից ներկայացվում են լուսաբանման հղումներ և լուսանկարներ՝

<https://www.redcross.am/news/24-health-care.html>

<https://www.facebook.com/photo.php?fbid=390638773902346&set=a.111813131784913&type=3&mibextid=WC7FNe&rdid=B8j5p22ZGbbUPncW>

<https://www.instagram.com/reel/C9Poi4msnhf/?igsh=dGRodnN3NjMxNWc0>

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղաժ դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Ծրագրով նախատեսված բոլոր գործողություններն իրականացվել են պայմանագրով նախատեսված միջոցառումների նկարագրությամբ համապատասխան: Դժվարություններ, որոնք հանգեցրել են դրամաշնորհառու կազմակերպության աշխատանքների ոչ արդյունավետ իրականացմանը, կապված են նոր շահառուների հայտնաբերման և նրանց Միասնական սոցիալական ծառայության կողմից ուղեգրման հետ: Խնդիրը նրանում է, որ նոր շահառուները կազմակերպությունից թաքցնում են որոշ տվյալներ, որոնք կարող են խանգարել ուղեգրմանը: Իսկ նման տվյալները հասանելի են միայն ՄՄԾ-ին: Արդյունքում կազմակերպությունը ծառայություններ մատուցեց մեծ թվով տարեցների, սակայն բավականին ուշ տեղեկացավ, որ նրանցից շատերի ուղեգրումը մերժվել է, ինչը հանգեցրեց համապատասխան չափով ֆինանսավորման հետզանձմանը: Մյուս կարևոր խնդիրը, որը ցանցային հանդիպումների ժամանակ բարձրաձայնվել է բոլոր կազմակերպությունների կողմից, դա պետության կողմից ֆինանսավորման չափն է, որը շատ ավելի ցածր է, քան անհրաժեշտ է մեկ խնամառուի սպասարկման, կամ տվյալ քանակով շահառուների համար ծառայության կազմակերպման համար:

Որպես առաջարկություն նշված խնդիրների վերաբերյալ կարելի է խթանել ՄՄԾ-դրամաշնորհառու կառույց համագործակցությունը: ՄՄԾ-ն պետք է շահագրգռված լինի, որպեսզի իր համայնքի կարիք ունեցող տարեցը կամ հաշմանդամություն ունեցող անձը արագ իրազեկվի ծառայության մասին և հնարավորինս արագ ստանա այդ ծառայությունը: Դրա համար պետք է կապ հաստատել դրամաշնորհառու կազմակերպության կամ նրա սոցիալական աշխատողի հետ, առավել ևս վերջիններիս դիմելու դեպքում՝ տրամադրել տվյալներ խնամքի կարիք ունեցող անձանց մասին:

Այլ խոչընդոտներ և դժվարություններ չեն առաջացել:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

Թեև 2025 թվականին չի նախատեսվում Մարալիկ քաղաքում պետական դրամաշնորհի շրջանակներում տնային խնամքի ծառայության տրամադրումը տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց, սակայն ՀԿԽԸ-ը շարունակելու է տնային խնամքի ծառայությունների մատուցումը՝ կարևորելով և զարգացնելով մատուցման որակը, արդյունավետությունը, մասնագիտական պատրաստվածությունը, ինչպես նաև իր ներդրումն է ունենալու Հայաստանի Հանրապետությունում տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և շահերի պաշտպանության ոլորտային զարգացումներում:

Կազմակերպվելու են միջոցառումներ, հանդիպումներ շահառուների տարբեր խմբերի համար՝ նրանց ակտիվ և արժանապատիվ կյանքի որակ ապահովելու նպատակով:

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում նման գործողություններ չեն իրականացվել: